Ի. Թ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ՀՈՂԻ ՄԱՍԻՆ» ԼԵՆԻՆՅԱՆ ԴԵԿՐԵՏԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՎԵՐՋԻՆ ԵՎ 1918 Թ. ՍԿԶԲԻՆ

1917 թ. աշնանը Ռուսաստանի հերոսական պրոլետարիատի հեղափոխական պայքարը՝ հանուն քաղաքական իշխանության նվաճման, պսակվեց հաղթանակով։ Հոկտեմբերի 25-ին ժամանակավոր կառավարությունը տապալվեց և երկրում հաստատվեց սովետական իշխանություն։ Հաղթանակի առաջին օրը բացվեց Սովետների համառուսաստանյան 2-րդ համագումարը, որը Վ. Ի. Լենինի ղեկուցման առթիվ ընդունեց «Հողի մասին» դեկրետը։ Հիմք ունենալով Ապրիլյան թեզիսներում ձևակերպված ագրարային հարցի լուծման հիմնական դրույթները սոցիալիստական հեղափոխության ժամանակաշրջանում և ընդառաջելով բազմամիլիոն գյուղացիության ցանկությանը, կոմունիստական կուսակցությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ իրականացրեց պատմության մեջ ամենահեղափոխական ագրարային ծրագիրը, որի ընդունումով վերացվեց կալվածատիրական սեփականությունը, հողը դարձավ համաժողովրդական սեփականություն, արմատապես ոչնչացվեցին ճորտատիրական մնացորդները հողատիրության մեջ, 150 միլ. դեսյատին հողատարածություն անվճար անցավ աշխատավոր ժողովրդին, գյուղացիները ազատվեցին հողային պարտքերից, ամենամյա վարձավճարներից ու նոր հողերի գնման ծախսերից։ Նվաճելով քաղաքական իշխանությունը, բանվոր դասակարգը պատվով կատարեց իր ազատարարի միսիան։ «Հողի մասին» դեկրետի ընդունումով հիմք դրվեց Ռուսաստանում ագրարային հարցի լուծմանը և հնարավորություն ստեղծվեց սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար։

Պատմական այդ փաստաթուղթը ամփոփում էր մարքսիզմի ագրարային տեսության ստեղծագործական կիրառման լենինյան հանճարեղ գաղափարները և ջախջախիչ հարված հասցնում բուրժուական ու ռեֆորմիստական այն տեսակետին, որ իբր «գյուղացիությանը խորթ է սոցիալիստական կացութաձևը և որ պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքը՝ դա բանվոր դասակարգի կողմից գյուղացիության շահագործումն է»[1]։ Ռեֆորմիստական այս սխալ տեսակետի հերքման ամենալավ ապացույցն է այն, որ աշխատավոր գյուղացիությունը հավանություն տալով դեկրետին, հեղափոխության հաղթանակի հենց առաջին օրից պատրաստակամություն հայտնեց մասնակցել սովետական իշխանության ամրապնդման գործին։ 1917 թ. նոյեմբերին դումարված գյուղացիական դեպուտատների համառուսաստանյան համագումարը միաձայն հավանություն տվեց դեկրետին, արտահայտելով այն համոզմունքը, որ բանվորների, զինվորների և իրենց կողմից նվաճած իշխանությունը կամրապնդվի։

Բայց կոմունիստական կուսակցությունը չէր կարող բավարարվել միայն օրենք ընդունելով, նա պետք է այն հասցներ մասսաների գիտակցությանը և այդ օրենքը իրականացներ նրանց օգտին։ Սկսվեց բոլշևիկների կազմակերպ-

---

1 Գ. Գալոյան, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության կեղծարարության դեմ, Երևան, 1961, էջ 371։

չական աշխատանքը գյուղում։ Այդ գործում հանդիս եկան մի շարք դժվարություններ, կապված այն բանի հետ, որ սովետական իշխանությունը երկրի ոչ բոլոր վայրերում էր հաստատվել։ Շատ տեղերում թույլ էր բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը, թույլ էր մասսաների հեղափոխական կոփվածությունը և բացի այդ, շահագործողական դասակարգերը ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս։

Այնուամենայնիվ, հուժկու թափ ստացած գյուղացիական շարժումը սկսեց տարածվել սովետական իշխանության հաղթական երթի հետ միասին և ամբողջ երկրով մեկ հնչեց գյուղացիական դեպուտատների ձայնը. «Ոտքի ելեք, ընկեր գյուղացիներ, որպես մեկ մարդ, բարձրացրեք ձեր ձայնը, հայտարարելով ձեր պահանջները»[2], կոչ անելով, որ «աշխատավոր գյուղացիությունը պատերազմ կհայտարարի իրեն կեղեքողներին՝ կուլակներին և կօգնի մեզ, մեր մղած կռվում, ժողովրդի լավագույն ապագայի և սոցիալիզմի համար»։

Պետրոգրադում հեղափոխության հաղթանակի և «Հողի մասին» լենինյան դեկրետի ընդունման լուրը մեծ խանդավառություն առաջ բերեց նաև երկրի ծայրամասերում և առաջին հերթին Անդրկովկասի բոլոր ազգությունների ամենալայն խավերի շրջանում։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքներում ու գյուղերում կազմակերպվեցին միտինգներ ու ժողովներ, որտեղ աշխատավորները ողջունում էին սովետական իշխանությունը և նրա առաջին դեկրետները։ Ինքնակալության տապալումից հետո բուրժուական կարգերի անկումը և սովետական իշխանության հաստատումը բուռն արձագանք գտավ երկրամասի ինչպես պրոլետարիատի, այնպես էլ գյուղացիության շրջանում։ Օրինակ. Ղուբայի գյուղացիական համագումարը 1918 թ. սկզբին ընդունած որոշման մեջ շեշտել է. «Միասնաբար ճանաչել սովետական իշխանությունը»։ «Բակինսկի ռաբոչի» թերթի հաղորդման համաձայն, Մարդակյան գյուղի բնակիչները որոշել են «Ամբողջությամբ ճանաչել կենտրոնում Ժողկոմսովետի իշխանությունը, իսկ տեղերում՝ բանվորների, զինվորների, նավաստիների դեպուտատների սովետները»[5]։ Հայաստանում, գյուղական շրջանների աշխատավորները մի շարք ելույթներ ունեցան ի պաշտպանություն սովետական իշխանության։ 1918 թ. հունվարի 9-ին, Հաղբատում կայացած ժողովի բանաձևում ասվում էր. «Հանուն սոցիալիստական ռևոլյուցիայի շահերի իշխանությունն ամբողջությամբ պետք է հանձնվի սովետներին, որոնք անողոք պայքար կմղեն հակառևոլյուցիոն տարրերի՝ բեգերի, աղալարների, խաների և կալվածատերերի դեմ։ Մենք խոսք ենք տալիս այս պայքարում սովետներին ցույց տալ վճռական օգնություն»[6]։

Հեղափոխական տրամադրության սմենն մի արտահայտություն գտնվում էր երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ Կուսակցության Դերբենտի կազմակերպությունը ՌՍԴԲՊ ԿԿ-ին ուղղած հեռագրում ողջունելով Սովետների համառուսաստանյան համագումարը, պաշտպանում էր «...պրոլետարիատին և չքավոր գյուղացիությանը»[7], իսկ Գու-

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 449։
3 Նույն տեղում, էջ 639։
4 «Великий Октябрь и борьба за Сов. власть в Азербайджане», Баку, 1958, стр. 231.
5 «Բակինսկի ռաբոչի», 1918, № 68։
6 «Կավկազսկի ռաբոչի», 1918, № 15։
7 ЦГАОР СССР, ф. 1235, оп. 2, д. 27, стр. 4.

դատուտիի կազմակերպությունը հայտնում էր «...իր պատրաստակամությունը, բոլոր ուժերով պաշտպանելու սովետական իշխանությունն ամբողջ Ռուսաստանում, որպես բանվորների, զինվորների և գյուղացիների իշխանություն, և ամբողջ ուժով պայքարել, որպեսզի Կովկասում անմիջապես իշխանությունն անցնի սովետների ձեռքը»[8]։

Իրենց կոչման բարձրության վրա էին գտնվում երկրամասի բոլշևիկյան թերթերը։ «Կավկազսկի ռաբոչի», «Բակինսկի ռաբոչի», «Սոցիալ-դեմոկրատ», «Բանվորի կռիվը», «Նոր կյանք» և կուսակցական մյուս օրգանները սկսեցին իրենց էջերում տպագրել հաղորդագրություններ Պետրոգրադի իրադարձությունների մասին, Սովետների համագումարից լուրեր և Վ. Ի. Լենինի ելույթներն ու հոդվածները։ Սովետական կառավարության առաջին դեկրետներին նվիրված հոդվածներում պրոպագանդվում և կոնկրետ օրինակներով ցույց էր տրվում, թե ինչ է իրենից ներկայացնում սովետական իշխանությունը և ապա օգտագործվում էր դեկրետների մոբիլիզացնող ուժը Անդրկովկասյան հակահեղափոխության դեմ պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության դասակարգային պայքարը կազմակերպելու և Մեծ հոկտեմբերի ուղիով առաջ տանելու համար։ Դեկրետների պրոպագանդման նշանակության մասին Վ. Ի. Լենինը գրում էր. «Մեզ մոտ մի շրջան կար, երբ դեկրետները ծառայում էին իբրև պրոպագանդման ձև։ Մենք մեր պատկերացումները քաղաքականության մասին հասարակ բանվորներին ու գյուղացիներին տալիս էինք միանգամից, դեկրետների ձևով։ Դրա հետևանքը եղավ այն հսկայական վստահության նվաճումը, որ մենք ունեինք և ունենք ժողովրդական մասսաների մեջ»[9]։

Բոլշևիկյան թերթերը առանձնահատուկ ուշադրությամբ կանգ էին առնում լենինյան ագրարային քաղաքականության վրա հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանում և մի շարք հոդվածներում պարզաբանում ու բացատրում էին «Հողի մասին» դեկրետը։

«Բակինսկի ռաբոչի» թերթը 1917 թ. № 75 և 76-ում լույս ընծայեց բոլշևիկյան ագրարային ռեֆորմի վերաբերյալ մի շարք նյութեր և «Հողի մասին» լենինյան դեկրետը։ Թերթը անչափ բարձր էր գնահատում սովետական նորաստեղծ իշխանության դեմոկրատական այդ միջոցառումը։ «Հողի մասին» դեկրետը և նրա հեղափոխական նշանակությունը» հոդվածում ասվում էր. «Ժամանակավոր կառավարության ութամսյա իշխանությունից հետո այժմ վերջապես ընդունվեց «Հողի մասին» դեկրետը, որով ամբողջ կալվածատիրական հողը անցնում է աշխատավոր գյուղացիությանը։ Դեկրետն իրականացնելու համար անհրաժեշտ եղավ խորտակել Կերենսկու կառավարությունը, որը չէր ցանկանում իրագործել հողային ռեֆորմը։ Էսեռական կուսակցությունը, որը միշտ պաշտպանում էր Կերենսկու կառավարությունը, դեկրետի հրատարակումից հետո սկսեց աղմկել, որ իբր այդ շատ քիչ փոփոխված այն ծրագիրն է, որը կազմել էր գյուղացիական դեպուտատների սովետը։ Ճիշտ է, որ դեկրետը այդ նույն ծրագիրն է։ Բայց, չէ որ Ժամանակավոր կառավարությունը չցանկացավ այն իրականություն դարձնել, իսկ սովետական նոր պետությունն այն դարձրեց օրենք՝ կյանքում կիրառելու համար»[10]։

---

8 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 4, д. 23, стр. 159.

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 359—360։

10 «Բակինսկի ռաբոչի», 1917, № 75։

Չէր կարելի ավելի պարզ և միաժամանակ ավելի սպառիչ խոսք ասել։ Դրոք, որ սովետական կառավարության առաջին դեկրետները, այդ թվում և «Հողի մասին» դեկրետը, կյանքում իրագործում էին բոլշևիկյան կուսակցության ծրագրային գիծը։ Բնութագրելով դրանք, ՌՍԴԲՊ Կենտկոմը տեղերի կուսակցական կազմակերպություններին գրում էր. «Եթե ձեզ անհրաժեշտ է իմանալ Կենտկոմի գիծը, ապա ձեր ուշադրությունն ենք հրավիրում Ժողկոմսովետի բոլոր դեկրետների վրա, քանի որ նրանք կենսագործում են մեր կուսակցության ծրագրային դրույթները»[11]։

Ագրարային նոր ռեֆորմի մասին լուրը հասավ նաև անդրկովկասյան գյուղը, որի վիճակի մասին Ստ. Շահումյանը գրում էր. «Ռուսաստանի ոչ մի մասում կալվածատիրական ճնշումը մի կողմից, և հողի պակասը մյուս կողմից, այնքան սուր ձևով չեն արտահայտվում, որքան Անդրկովկասում։ Եվ հենց այստեղ, Անդրկովկասում կարելի է հանդիպել ոչ միայն ճորտատիրական իրավունքի մնացորդների, այլև իսկական ճորտատիրական հարաբերությունների։ Այս հարաբերությունների պահպանմանը մի կողմից նպաստում էին տգիտությունն ու ճնշվածությունը, և մյուս կողմից անդրկովկասյան գյուղի խայտաբղետությունն ազգագրական տեսակետից[12]։ Պարզ էր, որ այս ծանր վիճակում գտնվող գյուղացին կձգտեր ազատության և պատահական չէ, որ հողային նոր ռեֆորմը բուռն արձագանք գտավ գյուղում ու նոր թափ հաղորդեց գյուղացիական շարժումներին, որոնք տարածվեցին ամբողջ երկրամասով մեկ «հողային հարցը ռուս եղբայրների օրինակով» լուծելու նշանաբանով։

Գյուղացիության դարավոր հոգսերն ու երազանքները մարմնավորող «Հողի մասին» դեկրետը, որը միաձայն ընդունվել էր նաև գյուղացիական դեպուտատների Համառուսաստանյան հավաքում, Անդրկովկասի հայ, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի գյուղացիներին միահամուռ կերպով համախմբեց հետևյալ կոչի շուրջը՝ «Բոլոր նահանգների, գավառների, շրջանային-հողային կոմիտեների և գյուղացիական դեպուտատների սովետներին. գյուղացիական դեպուտատների Համառուսաստանյան արտակարգ համագումարը բոլոր աշխատավոր գյուղացիներին կոչ է անում՝ ամբողջ ուժով պահպանել հողային կոմիտեները, հողի անվճար գյուղացիությանն անցման ուղղությամբ իրենց աշխատանքում և պաշտպանել այդ կոմիտեներին ամեն տեսակ բռնություններից կործանված դասակարգերի և Կերենսկու խորտակված իշխանությունների ոտնձգություններից։ Արտակարգ համագումարը հավատացնում է, որ աշխատավոր գյուղացուն հողի համար իր պայքարում կոգնի բանվոր դասակարգը և զինվորությունը»[13]։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները շատ լավ էին հասկանում, որ չի կարելի լուծել հողային հարցը առանց իշխանությունն ամբողջովին նվաճելու, այդ պատճառով էլ պայքարը հողի համար սերտորեն կապվում էր երկրամասում սովետական իշխանության համար մղվող պայքարի հետ։

Թե ինչպիսի տրամադրություն էին դրսևորում երկրամասի գյուղացիները, այդ մասին բազմաթիվ պերճախոս վկայություններից մեկն է Սարիղամիշի շրջանի գյուղացիական դեպուտատների սովետի 1917 թ. դեկտեմբերի 13-ին

11 Մեջբերումը ըստ «КПСС, Справочник», М., 1965, էջ 151։
12 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Երկեր, հ. երրորդ, Երևան, 1958, էջ 71։
13 «Բակինսկի ռաբոչի», 1917, № 96։

ընդունած բանաձևը՝ Ժողկոմսովետին պաշտպանելու մասին։ Այդ բանաձևում Սարիղամիշի հողի աշխատավորությունը առաջին հերթին ողջունում էր գյուղացիական համագումարին՝ բանվորների և գյուղացիների դեպուտատների սովետի Կենտրոնական կոմիտեին վստահություն հայտնելով նրա հետ ձուլվելու որոշման համար և ամեն կերպ պաշտպանում էր Ժողկոմսովետին, որպես երկրի իշխանության միակ օրգանի[14]։

Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակը ապահովելու և հողային հարցը հօգուտ գյուղացիությանը լուծելու համար, երկրամասի բոլշևիկները ծավալում են եռանդուն գործունեություն և մասսաներին համախմբում կազմակերպված պայքարի համար։ Դեռևս 1917 թ. հոկտեմբերին կայացած բոլշևիկյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարում Ֆ. Մախարաձեն իր զեկուցման մեջ, ագրարային հարցի վերաբերյալ, նշեց, որ գուսակցական կազմակերպություններն ամենուրեք պետք է կազմակերպեն գյուղացիական սովետներ կամ գյուղացիական կոմիտեներ և նրանց միջոցով ձեռնամուխ լինեն կալվածատիրական հողերի բռնագրավմանը, ինչպես նաև գյուղացիությանն ակտիվ պայքարի հանեն գյուղի շահագործողների դեմ[15]։

Գյուղացիական սովետների գործունեության նպատակն էր. «...տեղերի ռևոլյուցիոն ուժերի համախմբումը, գյուղում ռևոլյուցիան խորացնելը և տարածելը... ինչպես նաև հողի վերաբերյալ գյուղացիության կարծիքը մշակելը»[16]։ 1917 թ. հոկտեմբերին և հատկապես Սովետների երկրորդ համագումարում «Հողի մասին» դեկրետի ընդունումից հետո, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը ագրարային հարցի լուծման ասպարեզում, հանդիսանում էր կալվածատերերին իրենց տնտեսական իշխանությունից զրկելն ու գյուղացիությանը նրանց դեմ վճռական պայքարի դուրս բերելը։ Դեռևս 1917 թ. հոկտեմբերին Ալեքսանդրապոլի կայազորի զինվորա-գյուղացիական դեպուտատների սովետը, որպես բոլշևիկյան ագիտացիայի և աշխատանքի արդյունք, ագրարային հարցի շուրջն ընդունում է ընդարձակ մի որոշում, որտեղ ասված էր. «Բոլոր հողերն իրենց ջրերով ու ընդերքով... պետք է դառնան համաժողովրդական սեփականություն, առանց հատուցման»[17]։

Անդրկովկասի գյուղացիությունը չէր բավարարվում միայն որոշումներ և բանաձևեր ընդունելով։ Այնտեղ, որտեղ հնարավոր էր, աշխատավորներն իրենք էին բռնագրավում հողը։ Երկրամասի բոլոր թերթերում կարելի է հանդիպել այդ մասին վկայող հաղորդումների։ Այդ մասին չի լռում նույնիսկ բուրժուազիայի օրգան «Մշակ» թերթը, որի մի հաղորդման մեջ ասվում է, որ Գանձակից հեռագրել են անդրկովկասյան կոմիսարիատ՝ բողոքելով ագրարային շարժումից, որը տարածվել է Թոուզում և Կովլեարում։ Իր հերթին Գանձակի ներքին գործերի կոմիսարը խուճապահար հեռագրել է, որ «կալվածատերերի դրությունը լուրջ է, շարժումը կանգնեցնել չի կարելի տեղական ուժերով և խորհուրդ

---

14 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 141։

15 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 234։

16 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 119, ց. 1, գ. 26, թ. 17։

17 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 98։

է տվել «արտակարգ միջոցներ ձեռք առնել, այլապես շարժումը կտարածվի ամեն տեղ»[18]։

Այն, որ գյուղացիական շարժումը տարածվել էր «ամեն տեղ», չսպասելով կոմիսարիատի միջոցառումներին, այդ մասին բավական հետաքրքրական է նույն «Մշակում» քիչ ավելի ուշ տպագրված «Ադրարային շարժումը մահմեդական գյուղացիության մեջ» հաղորդումը, որտեղ «Կավկազսկի վեստնիկ» թերթի և «Ղազախի գյուղացիների պատմածի» հիման վրա թվարկվում են այն բոլոր խաները, բեգերը և աղաները, որոնք իրենց ունեցվածքից զրկվել են և պատժվել գյուղացիների կողմից։ Հողի աշխատավորները զինված ֆիզիկական հաշվեհարդար էին տեսել այն կալվածատերերի հետ, ովքեր դիմադրություն էին ցույց տվել»[19]։ 1918 թ. հունվարի 17-ին Թիֆլիսի նահանգային կոմիսարը հեռագրել է Դուշեթի գավառի կոմիսարին՝ կալվածատերերի շահերի պաշտպանման համար գյուղացիների դեմ շտապ միջոցառումներ կազմակերպելու մասին[20]։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների կատարած աշխատանքը գյուղում և բանակում դժվար է գերագնահատել։ Նրանք ամեն կերպ ձգտում էին ղեկավարել գյուղացիական ելույթները և կազմակերպված բնույթ տալ դրանց։ Գյուղացիական շարժման ծավալման այդ օրերին Ստ. Շահումյանը գրում էր. «Գիտակցությունը և կազմակերպվածությունը պայքարին պիտի տան ոչ թե դասակարգային վրեժի, այլ դասակարգային պայքարի բնույթ, որի նպատակը ոչ թե կալվածատերերին ֆիզիկապես ոչնչացնելն է, այլ տնտեսապես մահվան ենթարկելը՝ բռնագրավելով ամբողջ հողը և այն տալով գյուղացիական կոմիտեներին»[21]։ Ստ. Շահումյանը, Մ. Ազիզբեկովը, Ն. Նարիմանովը, Ս. Էֆենդիևը, Ա. Միկոյանը և ուրիշներ գյուղացիությանը կոչ էին անում ամրապրնդել միասնությունը բանվոր դասակարգի հետ և գյուղում իշխանությունը վերցնել իրենց ձեռքը։ Գյուղացիության շրջանում աշխատելու համար Գանձակի բոլշևիկները իրենց միջից առանձնացրել էին Մ. Ալիևին և Ա. Մռավյանին։ Որպես արդյունք այդ աշխատանքի «գնալով բոլշևիկներն ավելի ու ավելի էին վայելում գյուղացիների համակրանքը»[22]։ 1918 թ. փետրվարին Քութայիսում էայացած բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերենցիան նշեց այն մասին, որ հեղափոխությունից հետո 2—3 ամսվա ընթացքում գյուղի պատկերը սենսացիոնորեն փոխվել է, համարյա յուրաքանչյուր գյուղում կազմակերպվում է բոլշևիկյան բջիջ[23]։

Երկրամասի կուսակցական ղեկավարության կողմից գյուղացիության շրջանում տարվող աշխատանքին տրված կարևորության մասին խոսում է այն փաստը, որ 1917 թ. հոկտեմբերին Ալեքսանդրապոլ այցելելով, Ստեփան Շահումյանը ճառով հանդես եկավ գավառի գյուղացիական համագումարում և ընդհանրապես «վերադասավորեց պարտիական ուժերը զորամասերում, կայազորում, բնակչության մեջ, դեպոյում աշխատելու համար, դիրեկտիվ տվեց աշխատանքը ծավալել գյուղացիության շրջանում»[24]։

---

18 «Մշակ», 1918, № 7։

19 «Մշակ», 1918, № 49։

20 «Борьба за победу Советской власти в Грузии», Тбилиси, 1958, стр. 185.

21 «Великий Октябрь и борьба за Сов. власть в Азербайджане», Баку, 1958, стр. 229.

22 Նույն տեղում, էջ 223։

23 «Очерки истории КП Грузии», Тбилиси, 1957, стр. 323.

24 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 8, թ. 1, էջ 3—4։

«Հանուն աշխատավորական գյուղացիական ռևոլյուցիայի, հանուն բազմաշարշար գյուղացիության ապագայի, գնացեք գյուղերը... ռևոլյուցիան մեզանից այդ է պահանջում և մենք պետք է այդ անենք», կոչ էր անում «Բանվորի կռիվը» թերթը[25]։ Հետևելով բոլշևիկյան կոչերին, կուսակցական գործիչների մի մեծ խումբ ուղևորվում է գյուղերը, որտեղ ոգևորությամբ պարզաբանում է հողային դեկրետը և միաժամանակ կոչ անում տապալել կալվածատերերի և կուլակների իշխանությունը։ Բոլշևիկների Թիֆլիսի կոմիտեն այդ ժամանակ, ագրարային հարցի և դեկրետի պարզաբանման համար կազմակերպեց հատուկ կոնսուլտացիաներ և մշակեց այն ծրագիրը, որով պետք է գործեին գյուղում կուսակցության ներկայացուցիչները։ Շուտով Հայաստանի (Լոռի), Ադրբեջանի (Գանձակ, Ղազախ) և Վրաստանի (Ախալքալաք, Ախալցխա, Գորի, Դուշեթ) և ուրիշ շրջաններում գյուղացիները ոչ միայն բռնագրավեցին կալվածատիրական հողերը և կազմակերպեցին գյուղացիական կոմիտեներ, այլև նույնիսկ բոլշևիկների ղեկավարությամբ որոշ շրջաններում հայտարարեցին սովետական իշխանություն։ Հայաստանում, օրինակ, Հաղբատում գյուղացիները բոլշևիկների ղեկավարությամբ հռչակեցին սովետական իշխանություն։

Երկրամասի գյուղերում գնալով ավելի էին ուժեղանում դասակարգային հակասությունները և գյուղական չքավորությունը ոտքի էր ելնում ընդդեմ գյուղացիական վերնախավի և գյուղական բուրժուազիայի, իսկ որպես պատասխան, գրեթե ամենուրեք ռեակցիան դաժանորեն ճնշում և փորձում էր արյան մեջ խեղդել հեղափոխական ամեն մի շարժում և գյուղացիական ելույթները։ «Սակայն, ինչպես Կերենսկու ռեպրեսիաները չկարողացան կանգնեցնել ագրարային շարժման թափը Ռուսաստանում, այնպես էլ բեգերի ավազակային խմբերը չէին կարող խեղաթյուրել ագրարային շարժման էությունն Անդրկովկասում»[26]։ Եվ գնալով գյուղացիները նորանոր պահանջներով են սկսում հանդես գալ։ Այդ մասին են վկայում բազմաթիվ փաստաթղթեր։ Հայաստանում, Էջմիածնի շրջանի մի շարք գյուղերում, զայրացած գյուղացիները վռնդում են դաշնակ հարկահաններին և հրաժարվում են վճարել հարկերը[27]։ Մեկ ուրիշ փաստաթղթում ասված է, որ Սամաղարի գյուղի կոմիսարը տեսնելով, որ ժողովուրդը հրաժարվում է հարկերը վճարել, 1917 թ. դեկտեմբերի 15-ին վերադասներին հարկադրաբար խոստովանում է իր անզորությունը[28]։

Ագրարային շարժման ծավալման թափը հատկապես ուժեղ էր Վրաստանում։ Թիֆլիսի նահանգի մի քանի գավառներում այն շատ հուժկու բնույթ էր ստացել։ Սակայն հեղափոխական տարերքը կրում էր արյունալի բնույթ, և գյուղացիների կողմից սպանվել էին իշխաններ՝ Ցիցիանովները, Մաղալովները, Կարակոզովները և ուրիշներ։ Անդրկովկասյան կոմիսարիատը, որը չէր ճանաչել սովետական իշխանությունը և ժամանակին չէր ընդունել միջոցառումներ հողի հարցի լուծման համար, միանգամայն մեղավոր էր ագրարային շարժման ծավալման մեջ։ Այսպիսի պայմաններում հեղափոխական կազմակերպությունների նպատակը պետք է լիներ՝ նորմալացնել և հունի մեջ գցել շարժում-

25 «Բանվորի կռիվը», 1918, № 23։
26 «Բանվորի կռիվը», 1918, № 17։
27 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 103, գ. 108, թ. 10։
28 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 216, ց. 1, գ. 14, թ. 16։

ները[29]։ Վրաստանում ագրարային շարժման ուժեղացման մասին վկայում է նաև արխիվային մի փաստաթուղթ, ըստ որի Թիֆլիսի նահանգի կոմիսարը զգուշացնում է Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի, Գորիի, Դուշեթի գավառներում տիրող «անարխիայի» մասին, պատճառաբանելով, որ «նշված շրջաններում շատ են ուժեղացել բոլշևիկները»։ Բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը չէին ուրանում նաև կոմիսարիատի անդամները։ «1918 թ. հունվարի 12-ի նիստում Գ. Տեր-Ղազարյանը հայտնում էր, որ «բոլշևիկյան տրամադրությունները քանի գնում, ավելի ու ավելի են թափանցում բոլոր ռևոլյուցիոն կազմակերպությունները»[30]։

Հողային նոր ռեֆորմին հաղորդակից էին նաև զինվորները, որոնք իրենց հիմնական մասով շինել հագած գյուղացիներ էին։ Նրանք մեծ հետաքրքրությամբ հակվում էին դեպի բոլշևիկների ագրարային քաղաքականությունը և հողային հարցի մասին Լենինի հոդվածները։ Կովկասյան ռազմաճակատի Կարսի կայազորի բոլշևիկ ագիտատորներից մեկը այդ մասին հաղորդում էր, որ «կայազորում կտրուկ շրջադարձ է կատարվել դեպի մեր կողմը։ Մեզ լսում են և մեծ հաջողություն ունեն մեր զեկուցումները։ Վ. Ի. Լենինի «Հողի մասին» հրատարակության և ընդհանրապես մեր գրականության մեծ պահանջ կա»[31]։

Անդրկովկասի հեղափոխության պատմության մեջ իր հատուկ տեղն է գրավում 1917 թ. դեկտեմբերի 10-ին Թիֆլիսում կայացած կովկասյան բանակի երկրային 2-րդ համագումարը, որտեղ բոլշևիկյան ֆրակցիան ներկայացնում էին 160 պատգամավորներ Ստ. Շահումյանի գլխավորությամբ։ Համագումարում քննարկվեցին մի շարք հարցեր, որոնց շուրջը ընդունվեցին բոլշևիկյան բանաձևեր, իսկ Ժողկոմսովետին ուղղված դիմումում ասվում էր, որ զինվորները «պաշտպանում են Ժողկոմսովետի հողի և հաշտության վերաբերյալ դեկրետները, ինչպես նաև բանվորական վերահսկողության վերաբերյալ որոշումը»[32]։ Անդրկովկասի զինվորությունը համախմբվեց համագումարի որոշումների շուրջը և հսկայական թափ հաղորդեց գյուղացիական շարժումներին։ Ռազմաճակատից վերադարձած զինվորներն իրենց ձայնը միացրեցին բոլշևիկ ագիտատորներին և նրանց հետ միասին կազմակերպեցին գյուղացիներին ելույթի համար։ Նրանց հսկայական ազդեցության հետևանքը եղավ այն, որ 1918 թ. փետրվարի 23-ին Վրաստանում ուժեղացան ագրարային շարժումները և սկսվեց Լեչխումի գավառի զինված ապստամբությունը։ Ապստամբները գրավեցին գավառի կենտրոնը։ Տեղական սովետը դիմեց Վրաստանի աշխատավորներին՝ կոչ անելով պաշտպանել ապստամբ գյուղացիների պայքարը հանուն սովետական իշխանության։ Մենշևիկները օրենքից դուրս հայտարարեցին այդ գավառը և արգելեցին ապրանքների փոխադրությունն այդտեղ։ Նրանց նպատակն էր այս միջոցներով թուլացնել շարժումը։ Մենշևիկյան այդ որոշման դեմ հանդես եկավ ՌՍԴԲՊ-ի երկրային կոմիտեն։ Ռեակցիան միայն այն ժամանակ հասավ իր նպատակին, երբ ապստամբների դեմ գործադրվեց մեծ ռազմական ուժ և բռնագրավվեց այն զինվորների զենքը, ովքեր մասնակցել էին այդ շարժմանը»[33]։

---

29 «Борьба за победу Сов. власти в Грузии», Тбилиси, 1958, стр. 184

30 *Լ. Խուրշուդյան, Ստեփան Շահումյան, Երևան, 1959, էջ 192։*

31 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 1 (А), д. 337, стр. 20.

32 «Очерки истории Грузии», Тбилиси, 1957, стр. 319.

33 *Տե՛ս նույն տեղում, էջ 324։*

Բանակից վերադարձած զինվորները նշանակալից աշխատանք են կատարել նաև Հայաստանի շրջանների բազմաթիվ գյուղերում։ Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ նրանք մեծ գործունեություն են ծավալել Սևանի ավազանի գյուղերում։ Նրանց նախաձեռնությամբ Ելենովկայի շրջանի մի շարք գյուղերում ստեղծվել են երիտասարդական կազմակերպություններ և նույնիսկ Գոմաձոր գյուղում զորացրված բոլշևիկ Մ. Սարգսյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է գյուղական սովետ՝ «Գոմաձորի գյուղական սովետ. 1918» մակագրությամբ հատուկ կնիքով[34]։ Գյուղացիական շարժումները 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին վեր են ածվում զինված ապստամբության։ Ադրբեջանում գյուղացիական շարժման վրա զինվորների ազդեցություն համարյա չի եղել, որովհետև ցարիզմը, վարելով գաղութային քաղաքականություն, բանակ չզորակոչեց մի քանի փոքր ազգերի, այդ թվում և ադրբեջանցիներին։ Սակայն գյուղացիական հեղափոխական շարժման ալիքով էին բռնկված երկրամասի շատ ու շատ շրջաններ։

Հետզհետե հուժկու թափ ստացող գյուղացիական շարժումները ահաբեկեցին մենշևիկ-մուսավաթական և դաշնակցական պարագլուխներին, սպառնալով նրանց իշխանությանը։ Հակաժողովրդական կառավարությունը միջոցների դիմեց շարժումը արգելակելու համար։ Ամենուրեք սկսվեցին բռնություններ, հետապնդումներ՝ գյուղացիների նկատմամբ։ Կալվածատերերի բողոքի դիմումներն անընդհատ հոսում էին Թիֆլիս։ Եվ Անդրկովկասի ռեակցիոն կուսակցությունները որոշում կայացրին այն մասին, որ «քանի դեռ հողային հարցը սահմանադիր ժողովի կողմից չի վճռվել, գյուղացիները պարտավոր են իրենց տերերին վճարել վարձակալական և բոլոր տեսակի այլ հարկերը, տուրքերն ու պարտքերը, և այն էլ 1916 թ. ճորտատիրական դրույքներով[35]։ Իսկ հողային կոմիտեն կոչ էր անում գյուղացիներին «սպասել ագրարային հարցի լուծման մոտալուտ ժամին»[36]։ Իրոք, որ անհրաժեշտ էր այդ մոտալուտ ժամի դալը, քանի որ կոմիսարիատը չէր կարող անտարբեր սպասել դեպքերի վախճանին։ Եվ հակահեղափոխական այդ կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 16-ին ընդունեց «Կանոնադրություն արքունական, նախկին եկեղեցական, վանքապատկան, իրավական անձերի և խոշոր մասնատիրական հողերը հողային կոմիտեներին հանձնելու մասին» դեկրետը։

Դիպուկ կերպով մերկացնելով այդ կանոնադրության հակաժողովրդական էությունը, Ստեփան Շահումյանը գրում էր. «Անդրկովկասյան կոմիսարիատը նույնպես դեկրետ հրատարակեց հողի մասին։ Բայց այդ դեկրետով պահպանվեց կալվածատիրական հողատիրությունը, իսկ մնացած հողերը հանձնվեցին ոչ թե գյուղացիական կոմիտեներին, այլ վերևից նշանակված ինչ-որ հողային կոմիտեների։ Եվ դուրս եկավ այնպես, որ հողային հարցը լուծեցին ոչ թե իրենք գյուղացիները, այլ ինչ-որ կազմակերպություններ, ինչպես ճորտատիրական կարգերի ժամանակ էր»[37]։

Հարկադրաբար ընդունված այդ կանոնադրության հիմնական նպատակներից մեկն էր մասսաներին հեռու պահել «ռուսական վճռից»։ Նրա հեղինակ-

---

34 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 1201, թ. 6։

35 Վ. Միքայելյան, Հայաստանի գյուղացիությունը սովետական իշխանության հաղթանակի համար մղած պայքարի ժամանակաշրջանում, Երևան, 1960, էջ 42։

36 «Մշակ», 1917, № 243։

37 Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1935, էջ 300։

ները չէին թաքցնում այդ և կոչ էին անում գյուղացիներին «ամեն կերպ կարդ պահպանել գյուղում, ինքնագլուխ գործեր չկատարել և ռուսաց հողային կոմիտեների վճիռը չձեռնարկել օգտվելու մասնատիրական և այլ հողերից, որ չեն գտնվում գյուղացիների տրամադրության տակ...»[38]։ Այն, որ այդ «կանոնադրությունը» իր սուր ծայրով ուղղված էր հողի մասին լենինյան դեկրետի դեմ՝ նրա ազդեցությունը Անդրկովկասում արգելելու համար, բնականաբար չէր կարող վրիպել բոլշևիկների ուշադրությունից։ «...առաջին հերթին չպետք է մոռանալ այն, որ այդ դեկրետը հրատարակված է որպես հակակշիռ Ժողկոմսովետի ընդունած դեկրետի» և, այնուհետև, բոլշևիկյան մամուլը շարունակում էր. «...մեզ արդեն հայտնի է, որ Ժողկոմսովետի դեկրետը արտահայտում է հենց իր՝ ժողովրդի կամքը..., իսկ «կանոնադրությունը» պարզ և հրստակ ասում է այն մասին, որ այն կազմելու ժամանակ ավելի շատ մտահոգվել են կալվածատերերի և խոշոր հողատերերի, քան թե չքավոր գյուղացիության մասին»[39]։

Ուշադրության արժանի հանգամանք է այն, որ Անդրկովկասյան կոմիսարիատի «կանոնադրությունը» մյուս կողմից հարմար առիթ էր հանդիսանում ագրարային շարժման ուժեղացման համար։ «Մշակ» թերթի մի հաղորդման համաձայն, «Դանձակի նահանգի Նուխու գավառից հուզումնալից լուրեր են ստացվում... եկողները պատմում են, որ ներկա շարժումը Դանձակի գավառում հետևանք է վարչական սահմանափակումների և Անդրկովկասի կոմիսարիատի արձակած հողային դեկրետի»[40]։

Այս բոլորից հետո միանգամայն պարզ էր, թե ինչու էր Անդրկովկասյան կոմիսարիատը միջոցառումներ ձեռնարկում իր անվտանգության պահպանման համար և հասկանալի էր կալվածատերերի դժգոհությունները անընդհատ արագացող գյուղացիական շարժումներից։ Հողի մասին նոր օրենքի ընդունման լուրն արթնացրեց գյուղացիությանը, որը ՌՍԴԲՊ Կենտկոմի և Երկրկոմի դիրեկտիվների լույսի ներքո, պրոլետարիատի հետ ամուր դաշինք կնքած, դնում էր դեպի պայծառ գալիք՝ ամբողջ Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումը։

И. Т. МАНУКЯН

ОТКЛИКИ НА ЛЕНИНСКИЙ «ДЕКРЕТ О ЗЕМЛЕ» В ЗАКАВКАЗЬЕ В КОНЦЕ 1917 — НАЧАЛЕ 1918 гг.

Резюме

Одним из больших завоеваний Октябрьской революции является принятие «Декрета о земле», который покончил с остатками феодализма в земельных отношениях и открыл возможности для развития социалистического сельского хозяйства. Эта реформа вскоре нашла отклик в закавказской деревне и придала новый размах крестьянскому движению,

38 «Մշակ», 1918, № 15։
39 «Կավկազսկի ռաբոչի», 1917, № 226։
40 «Մշակ», 1918, № 1։

целью которого было «решение земельного вопроса по примеру русских братьев». В этом деле большое значение имела работа большевистских деятелей и организаций края. Среди крестьян работали такие видные деятели, как Ст. Шаумян, М. Азизбеков, Н. Нариманов, А. Микоян, А. Мравян и другие. В результате чего крестьянское движение в конце 1917 г. и в начале 1918 г. приняло такой размер, что обеспокоенный этим Закавказский Комиссариат издал земельный закон, который не только не ослабил движение, но наоборот, вызвал еще больший его размах, слившись с общим революционным движением края для победоносного завершения установления Советской власти.